ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 43/08

Քաղ. Երևան **8 դեկտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ.Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. դեկտեմբերի 8-ի նիստում (արձանագրություն № 66/11) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2008թ. նոյեմբերի 3-ի բողոքը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ IR 915768 միջազգային գրանցում ունեցող OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների նկատմամբ 2008թ. մարտի 21-ի նախնական մերժման մասին որոշումը անփոփոխ թողնելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. օգոստոսի 1-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15-րդ կետի 2-րդ և 93-րդ կետի 2-րդ ենթակետերի համաձայն IR 915768 միջազգային գրանցմամբ OVESO ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասում նշված բոլոր ապրանքների նկատմամբ նախնական մերժման մասին որոշումը թողել է անփոփոխ՝ ՀՀ միջազգային պայմանագրերին համաձայն նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ՝ ОВЕСОЛ (կիրիլիցա) (Zakrytoe akzionernoe obtchestvo Evalar, rue Sozialisticheskaya, Biisk, RU-659332 Altaisky krai (RU) IR 877609 միջազգային գրանցմամբ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի առկայության պատճառով:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը հայտնում է, որ հայտատուն՝ SCHERING AKTIENGESELLSCHAFT ընկերությունը, ՄՍՀԿ է ներկայացրել խնդրանք՝ ԱԾՄԴ-ի 05-րդ դասում նշված ապրանքների ցանկը հետևյալ կերպ սահմանափակելու վերաբերյալ. «Դեղագործական պատրաստուկներ, այն է՝ պատրաստուկներ ուռուցքաբանական հիվանդությունների և սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման, Պարկինսոնի հիվանդության, ցրված սկլերոզի և իմունոլոգիական անբավարարության այլ տեսակների համար, հորմոնային պատրաստուկներ

գինեկոլոգիական նպատակների համար» (նշված պաստաթղթի պատճեն բողոքարկման խորհուրդ է ներկայացվել 24.11.08թ.):

Այսպիսով, հայտատուն բողոքարկման խորհրդի ուշադրությունն է հրավիրում այն փաստին, որ OVESO (IR 915768) հայտարկված ապրանքային նշանի ապրանքների սահմանափակված ցանկում ընդգրկված ապրանքները տարբերվում են այն ապրանքներից, որոնց համար գրանցված է ОВЕСОЛ (IR 877609) հակադրված ապրանքային նշանը, այն է. «Թուրմեր բժշկական նպատակների համար. Բույսերի էքստրակտներ դեղագործական և բժշկական նպատակների համար»« ուստի և բերելով իր փաստարկները, խնդրում է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և SCHERING AKTIENGESELLSCHAFT (DE) հայտատուի OVESO ապրանքային նշանի IR 915768 միջազգային գրանցման գործողությունը տարածել Հայաստանի Հանրապետությունում՝ ԱԾՄԴ 05-րդ դասի ապրանքների սահմանափակված ցանկում նշված դեղագործական պատրաստուկների նկատմամբ:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը գտնում է, որ OVESO (IR 915768) բառային ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը ՀՀ-ում ԱԾՄԴ 05-րդ դասի ապրանքների համար մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը կայացվել է օրինական հիմքերով, նկատի ունենալով, որ փորձաքննությունը առաջնորդվել է օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասկետի բ) ենթակետով, որի համաձայն «որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող, ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին»: Տվյալ դեպքում« ինչպես հայտարկված OVESO, այդպես էլ հակադրված ОВЕСОЛ նշանը՝ բառային ապրանքային նշաններ են, որոնք միանշանակ շփոթելու աստիճան նման են, քանի որ միայն մեկ տառով են տարբերվում իրարից, ընդ որում, հակադրված ОВЕСОЛ ապրանքային նշանի մեջ վերջին տառը այդքան թույլ է արտասանվում, որ հնչունայն տեսակետից շփոթելու հնարավորությունը անխուսափելի է:

Բացի դրանից, փորձաքննությունը՝ իր որոշումը կայացնելիս« հիմք է ընդունել այն հանգամանքը, որ, ՀայաստանիՀանրապետությանմիջազգայինպայմանագրերինհամապատասխանպահպանվող՝այլ անձանցապրանքայիննշաններինմասնավորապեսՀայաստանիՀանրապետությունումհանրահայտճանաչվածապրանքայիննշաններինորոնքպահպանվումենՓարիզյանԿոնվենցիայիհոդվածինհամապատասխանինչպեսնաևՀամաձայնագրինևԱրձանագրությանը՝համապատասխանպահպանվողնշաններինթեպետ հայտատուի OVESO ապրանքային նշանի ապրանքների ցանկը կրճատվել է, սակայն այդ փոփոխությունը չի վերացրել սպառողի կողմից ապրանքները շփոթելու հնարավորությունը: Տվյալ դեպքում հնարավոր չէ հստակ ասել, թե ОВЕСОЛ հակադրված ապրանքային նշանով պաշտպանվող թուրմերը ո՞ր հիվանդությունների համար են

նախատեսված: Եթե նույնատիպ դեղեր են և նույն նպատակների համար են օգտագործվում, ապա նույնիսկ շփոթելու դեպքում դա այդքան վտանգավոր չէ: Իսկ եթե ապրանքները (դեղերը) տարբեր նպատակների համար են օգտագործվում, ապա, կոլեգիայի կարծիքով, շփոթությունը կբերի ավելի ծանր հետևանքների, քանի որ մեկ դեղի փոխարեն գնորդը կարող է ձեռք բերել լրիվ մեկ այլը, հատկապես հաշվի առնելով, որ, օրինակ, սրտանոթային համակարգի հիվանդությունների բուժման համար դեղերը բաց են թողնվում առանց դեղատոմսի:

Այդ առումով հայտատուի ներկայացուցիչ Ա.Գալոյանը հարկ է համարել նշել, որ, սովորաբար, դեղամիջոցներ արտադրող խոշոր ընկերությունները իրենց ապրանքների պիտակների և տուփերի վրա, ապրանքային նշանի հետ մեկտեղ, զետեղում են նաև արտադրող ֆիրմայի լոգոն, ինչը զգալիորեն նվազեցնում է սպառողի մոտ շփոթության հավանականությունը (տվյալ դեպքում OVESO ապրանքային նշանի համար դա կլինի սպառողին քաջ հայտնի BAYER լոգոն): Սակայն բողոքարկման խորհուրդը չկարևորեց այդ հանգամանքը, նկատի ունենալով, որ սպարողների քիչ մասն է ճանաչում արտադրող ֆիրմաների անունները և նրանց նշանները կամ իրենց ընտրությունը կատարելիս՝ առաջնորդվում է այդ սկզբունքով:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները, բողոքարկման խորհուրդը հիմքեր չի տեսնում փորձաքննության որոշումը վերանայելու համար:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «բ» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2008թ. նոյեմբերի 3-ի բողոքը և OVESO (IR 915768) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 05-րդ դասի բոլոր ապրանքների համար մերժելու մասին 2008թ. օգոստոսի 1-ի կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան